ՎԱՀԻՐ



№ 9 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1910

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Շահն-շահ Ամէդ-կաջար . . . . . Պատկեր
Մայրիկիս համ ուզում . . . . . Զարուհի
Օրհնու նաւ . . . . . Պատկեր
Շահի պալատը . . . . . Պատկեր
Կռունկները (բանաստեղծ.) . . . . Գ. Մոճոռեան
Հաւատալ կը լինի . . . . . Օ. Ն. Գրիգորեան
Ամառանոցում . . . . . Պատկեր
Աստղերի ոպին (պատկերներ) . . . . Սօվասիլեան
Այժմ ինչ է անում Մատնամրիկ . . . Պատկեր
Ծեր ուռենին (բանաստեղծ.) . . . . Յ. Գետրոսեան
Քարի մէջ արիւն կայ . . . . . Տ. Վ. Դաղեան
Սրա-լեկը (պատմուածք) . . . . . Գ. Մ. Հախնազար
Մատիտի 250-ամեակը . . . . . Մ. Աղայեան

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ

Սեպտեմբեր . . . . . Պատկեր
Առաջին անգամ ուսումն. գնալս . . . Գ. Այվազեան
Նամակ Երեւանից . . . . . Գ. Վարդանեան
Նամակ Սանահնուց . . . . . Ամբիկ

ՕԳՏԱԿԱՐ ԺԱՄԱՆՑ

Դէն չը շպրտէք կոտրած անօթը։ Գիւղացի մանուկների երգերից։ Սուերախաղ—Իմացէք ով է։ Բառախաղ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Ադրիա-Տարազի 5000 №-ների (բաժանորդների) մէջ 500 առարկաների վիճակահանութեան նկարագիրը և վիճակ տանող բաժանորդների ցուցակը տպագրւած են Տարազի № № 5, 6, 7, 8 և 9-ում։

Նրանց, որոնք դեռ չեն ստացել իրանց վիճակ ընկած իրները, խմբագրութեան գրասենեակը խընդրում է կարդագրել առանալու։ Պօստակարտեր, գրքեր, ալբօմներ, նկարների մի մասը կարելի է ստանալ և պատւերւած բանդերօլով, որոնց համար պէտք է ուղարկել պօստի ծախս 30 կ. մարկաներ։ Եթէ դրամն աւելանայ փոխարէնը կուղարկւի պօստակարտ։ Իսկ մընացեալ միւս առարկաները պէտք է ուղարկւեն կապոչնեով, խողովակներով և պօստի ծախս կը պահանջւեն 45 կոպէկից մինչև 1 ր. իւրաքանչիւր կապոցի համար։ Վերոյիշեալ վճարով պատւէրներ խմբագրութեան գրասենեակը չէ կատարում։

ԱՂԲԻՒՐ

XXVIII ԿԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԳԻՐ XXVIII

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ԵՒ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Քահանայապետական տարի. 1910. № 9 *Սեպտեմբեր*

Խմբագիր-հրատարակիչ՝ Տիգրան Նազարեան

ԱՐԵԳՆԱՓԱՅԼ

ՇԱՀՆ-ՇԱՀ

ՍՈՒԼԹԱՆ

ՒՀՄԲՊ ԿԱՋԱՐ

ԹԱԳՒՒՀՈՐ ԿԱՅՍՐ

ՊԱՐՍԱՒԱՍՏԱՆԻ

Ծն. *1328* թ. Գաւառաքաղ
ամսի *27*-ին

(1896 թ. 20 օգոստոսի)

ՄԱՅՐԻԿԻՍ ԵՄ ՈՒԶՈՒՄ

—Նանամ... Նանամ... Նանամ...

—Բալամ... Բալամ... Բալամ... Զաւակս, աչքիս լոյս, թագաւորների թագաւորս, զարթիր, սթափուիր, աչքերդ բաց,—ողբաձայն կանչում էր մի միջահասակ կին։

—Նանամ...

—Բալաս... Գլխիս թագը, դու ոսկի, ալմաստ-մարգարիտ թուրդ, եաղուբ, զմրուխտ թախթդ, մարջան, փերուզա պալատդ ոչնչի տեղ ես դնում ու միաբերան նանիդ ես ուզում։ Այդպէս չի կարելի, շահն-շահս, բաւական է որքան լաց եղար։

—Ջէ՞որ ասում ես շահն-շահ եմ։ Էլ ինչի՞ թագաւոր եմ, որ չեմ կարող մայրիկիս մօտ լինել,—աչքերը սրբելով, վերջապէս խօսեց տասներկու տարեկան շահը, անկողնի մէջ պառկած։

—Կեանքս ու վիճակս տնօրինողը, շահն-շահս, քեզ չե՞մ ասել որ ընտիր հետ նանաղ էլ դռնաղ է գնացել Մոսկովների թագաւորին։

—Ինձ չես կարող խաբել, այսքան երկար ժամանակ ուրիշի տան դռնաղ չեն մնալ։ Ես էլ եմ ուզում այնտեղ դռնաղ գնալ, ինձ էլ տարէք նանիս մօտ։

***

Միջահասակ կինը մանուկ շահի ծծմայրն ու դայեակն էր, հարազատ մօր փոխարինողը։ Հէքիաթներ էր ասում շահին, պատմում էր նրա հզօր պապերի քաջագործութիւնները և գալով-գալով պատմում էր, թէ ինչպէս Մոսկովներին դռնաղ գնացած իր հայրը գործիք դարձաւ օտարներին, հարազատ ժողովրդին թշուառութեան մէջ գցեց և այն տեղը հասցրեց, որ ազգը գահընկեց արաւ նրան։ Կառավարութեան ղեկը ձեռքն առաւ և իրան մանուկ,

---

Նանա—մայրիկ։ Բալա—զաւակ։ Դռնաղ—հիւր։ Բաբա—հայրիկ։ Շահն-շահ—թագաւորների թագաւոր։

Թէհրան. Շահի պալատը

սիրասուն շահին թախթին բազմեցրեց, ստանձնելով և ապագայ հրամանատարի գաստիարակութիւնը։

Պատմում էր, որ լայնատարած Իրանի բոլոր մայրերն են այժմ նրա գորովագութ նանան և ժողովուրդը—քաքան։ Հաւատացնում էր, որ սրանք ուխտել են այնպէս խնամել, մեծացնել իրանց մատաղ շահն-շահին, որ հասունանալուց այդ բոլոր նանաների զաւակներին նա ճանաչէ, ընդունէ և խնամէ իբրև հարազատ եղբայրների և քոյրերի։

—Ի հարկէ, ի հարկէ, իմ օրով ոչոքի նանային իր քաքայի հետ ես չեմ թողնիլ որ Մոսկովներին, Ինգլիզներին դնտաղ գնան։

—Ահա, աչքիս լոյս, էղպէս։ Իմացիր և միշտ մտքումդ պահիր, որ ժողովրդի խաթրը չի կարելի կոտրել, արհամարհել։ Իսկ քո քաքաղ, Ալի-Մահմէդ շահը, ժողովրդի խաթրը կոտրեց։ Իրանը նա ոնհատակ ուաւ։ Ինքն էլ այսօր դարիը, ուրիշի դռան, ուրիշի աչքունքի, ձեռքի նայող։

* * *

Աչքաբաց մանուկ շահը քաջ ըմբռնել էր թէ իր վիճակի վեհութիւնը և թէ հայրենիքի իր վրայ դրած պարտականութիւնը։ Շահը գիտէր, որ եթէ Ինգլիզը, Լէմնը, Մոսկովը հզօր են, պատճառը, որ նրանք շատ կարդացած են, շատ երկաթուղիներ ունեն։ Նրանց գործարաններումն են մահուդ, չիթ, շաքար, դէնքեր պատրաստում և բերում թանգ-թանգ գներով իր խեղճ ժողովրդի վրայ ծախում։ Իրանի քաղցրահամ պտուղները, բերքերը արտահանում են համարեա ձրի և իր ժողովրդին թողնում քաղցած ու տարին տասներկու ամիս պարտքի մէջ խրւած։

Մանուկ շահը մտորում էր ամենից առաջ Ինգլիզի, Լէմնի նման իր Պարսկաստանում դպրոցներ բանալ, գործարաններ հիմնել և երկրի բոլոր ան-

Իրան—Պարսկաստան։ Նարբ—կամք։ Դարիր—պանդուխտ։

կիւնները միմեանց հետ երկաթուղու ցանցերով շաղկապել։

Իր այս նպատակին հասնելու համար մանուկ շահը առաւօտից մինչև երեկոյ անդադրում դասերը սովորում, կարդում էր, որ զարգանայ և լաւ ըմբռնէ իր ապագայ գործունէութեան ծրագիրը։

***

Աննման խաղալիքներ ունէր մանուկ շահը. համարեա բոլոր երկրների թագաւորները, թագուհիները, արքայազուննները նրա համար շատ խաղալիքներ էին ուղարկել։ Մկզբում նրա սիրելի խաղալիքը զերմանացոց վիլհելմ կայսրի ուղարկած երկաթուղու գնացքն էր, վագոններն էլ լիքը Գերմանիայի ամեն տեսակ ապրանքներով։ Այստեղ կային զրքեր, պատկերներ, թատրոնական դեկորացիօններ, զանազան տեսակ զէնքեր, թնդանօթներ, հազուստեղէն։ Գերմաներէնի ուսուցիչը մեծ ջանքերով պատմում էր պատանի շահին Գերմանիայի առաջադիմութիւնը և յաղթանակները պիտութեան, արուեստի և արհեստների մէջ։

***

Երկաթուղին սաստիկ զբաղեցրել էր շահին, և նա մտորում էր մի ճեպընթաց ունենալ, որ կարող լինի յաճախ իր մայրիկին դնռադ հրաւիրել։

Բայց վերջը, երբ շահն իմացաւ, որ իր մայրիկն առանց անցագրի չի կարող դնռադ գալ, այժմ ուրիշ մտորումներով է նա տարուել։

Մանուկ շահը կամենում է այժմ շինել մի այնպիսի օդաչու, որ մէջը նստած կարողանայ լինքը երկնքով թռչունների նման թռչել - կիրակի և տօն օրերը, երբ դասերից ազատ լինի, իր նանի հետ միասին լինել։

Եւ ամեն գիշեր մանուկ շահը երազում թռչում է դէպի իր մայրիկը։ Սակայն Սև ծովը դեռ

չըհասած, սահմանի վրայ ուժգին քամին դիմադրում է նրան, յետ տալիս գցում կասպից ծովը։

Ահա այդ ժամանակ է, որ մանուկ շահը երազում կանչում է նանամ... նանամ... նանամ...

Օդաչու ան.

Բայց, ի հարկէ, պատանի շահը չէ վհատւում, այլ ընդհակառակն նա աւելի է ջանում դասերը լաւ սովորել, շուրջը ուսումնասիրել, որպէսզի հասուննանալուց այնպիսի մեծ անուն, հռչակ հանի, ինչպէս այժմ սպանացոյց երիտասարդ Ալֆօնս թագաւորը, որը սպանական գահին բազմել էր դեռ աւելի մանուկ հասակում, քան ինքը։ Բայց այսօր, չնորհիւ իր դաստիարակութեան և գիտակցութեան, իր մէջ մարմնացնելով ժողովրդի կամքը, ազգի սիրելին է և նախատած է նրա բարգաւաճման ու բարօրութեան։

Զաւուխի



Կռունկներ

Ո՞ւր էք գնում շարան-շարան,
Հէյ դուք սիրուն կռունկներ,
Ո՞ւր էք թռչում այդպէս արագ
Մեր աշխարհից հիւրասէր։
Զլինի՞ արդեօք մեր վաթանը
Դուք նեղ գտաք ձեզ համար
Եւ շտապով դուք թռչում էք
Մի երջանիկ նոր աշխարհ։
Բայց ա՛խ, գիտեմ, դուք էլ ինձ պէս
Էս վաթանին գերի էք,
Դուք էլ ինձ պէս, հէյ կռունկները,
Մեր լեռների փերին էք։
Եւ պիտի գաք դարձեալ շտապ
Էս վաթանը մեր սիրուն,
Երբ հեռանայ սև ձմեռը,
Երբ որ բացւի նոր գարուն...

Պետ. Մոմուեան

Հաւասար կշիռի

Ոլակը շատ փոքր էր, դեռ ուսումնարան չէր գնում, այլ լաւ եղանակներին հաւարեա ամբողջ օրը իրանց պարտէզում վազվզում էր և երբ յոգնում էր շատ խաղալուց, տուն էր գալիս, նստում յատակի վրայ, պատկերազարդ գրքերը ծընկների վրայ դնում ու մինչի պատկերներին նայում։

Քանի օր էր ինչ անձրևը սեղանի պէս վրայ էր տալիս, որից եղանակը անուսնելի խոնաւացել էր։

Սաստիկ ցեխի պատճառով տանից դուրս գալ չէր լինում։

Ոլակը լուսամուտի առջև նստած՝ ախուր նայում էր դէպի դուրս։

—Մ՛այրիկ ջան,—դիմեց մօրը,—ուրեմն եղանակի պատճառով այսօր էլ չըպիտի կարողանամ խաղալ պարտէզում։

—Այո՛, հոգիս, այսօր էլ,— ժպտալով պատասխանեց մայրը։

Ոլակը աւելի ևս ախրեց. նա թթուած ու բարկացած դէմքով երկնքին նայեց։

—Չեմ հասկանում թէ Աստուած ինչո՞ւ չի ուզում որ լաւ եղանակ լինի... Ինչո՞ւ է անձրև գալիս։

—Սիրելիս,—նկատեց մայրը,—լաւ բան չասացիր, այդ լաւ չէ. դու միմիայն քեզ համար ես մտածում, այն ինչ Աստուած բարի լինելով՝ մտածում է բոլոր մարդկանց համար։ Մի քանի օր տանը փակուած մնալուց ձանձրացել ես, սիրուդ պարտէզում վազվզել է ուզում և դրա համար էլ անձրևը քեզ դիւր չի գալիս։ Բայց կան մարդիկ, որոնք անձրևի համար շատ ուրախ են և պատրաստ են աւելի երկար ժամանակ տանը փակուած մնալ, միայն թէ այդպէս անձրևէր։

—Այդ ինչ մարդիկ են, որոնք ուրախ են անձրևի համար,—հարցրեց Յոլակը զարմացած։

—Համարեա բոլոր գիւղացիք, բոլոր երկրագործները, հողագործները, պարտիզպանները, որոնց աշխատանքը անձրևից է կախւած։ Ձիշտ ես ամառանոցում առաւօտները մեզ համար թարմ կաթ, կարագ, մածուն բերող գեղջկուհուն։

—Օհանի և Կարօյի մայրիկին։

—Այո։

—Ձիշտ եմ։

—Հիմա ես մի բան կըպատմեմ քեզ այդ կրնոջ մասին և դու պարզ կըհասկանաս, թէ որքան մեծ նշանակութիւն ունի անձրևը մարդկանց համար։

Մօր խօսքերը շարժեցին փոքրիկ Յոլակի հետաքրքրութիւնը, նա խնդրեց եկաւ նստեց բազմոցի վրայ մօր կողքին և հետաքրքրութիւնից փայլուն աչքերը ճգնապատնեշով սկսեց նայել նրա երեսին։

—Այս բանը, որ հիմա պէտք է պատմեմ,—սկսեց մայրը,—պատահել է սրանից տասը տարի առաջ։ Այն ժամանակ դու դեռ աշխարհ չէիր եկած։ Մեզ համար կաթ ու մածուն բերող կնոջ ամուսինը Գրիգորը շատ բարեսիրտ և աշխատասէր գիւղացի էր. բոլոր գիւղացիների նման, նա ևս իր ժամանակին միշտ վարում էր իրա տափերն ու ցանում, տափանում, որպէսզի երբ արտերը հասնէին, հրնձէր, խրձեր կապէր, բերէր կալում դէզեր դնէր, կալսէր և սառցած ցորենը տանէր Ջրաղաց ալիւր աղար, տուն բերէր, որ հաց թխէին։

—Մի՞թէ այդքան բան պէտք է անել հաց ձեռք բերելու,—ընդհատեց մօր խօսքը Յոլակը։

—Հապա դու ինչ էիր կարծում։ Ինչևէ, այդ թող ձնայ, դեռ խօսքս վերջացնեմ։

—Այդ տարի Գրիգորը ևս, միւս գիւղացիների նման, ինչպէս միշտ, վարեց իրա տափերը, ցանեց, այն յուսով, որ անձրևը կօգնի իրան։

—Բայց անձրևը ինչպէս կարող է օգնել գիւղացուն, մայրիկ-ջան,—զարմացած հարցրեց Յոլակը։

—Ահա թէ ինչպէս, հոգիս. երբ անձրև է գալիս, գետինը ջուրը ծծում է իրա մէջ, որից հողը, մանաւանդ վարած հողը փափկում է. ահա այդպիսի

հողի մէջ ցանած ցորենի հատիկները խոնաւութիւնից ծլում են ու երբ անձրևից յետոյ պայծառ արևն էլ տաքացնում է գետինը, կարճ միջոցից յետոյ ցանած տափերը ծածկւում են սիրուն ու մատղաշ կանաչ խոտով, որոնք արտեր են կոչւում. այդ մատաղ կանաչ արտերը ձմեռը ձիւնի տակ մնալով սաստիկ ցրտերից անվնաս են մնում։

—Ուրեմն ձիւնն էլ է օգնում գիւղացուն, ինչպէս անձրևը, հա, մայրիկ-ջան։

—Այո, հոգիս. եթէ ձիւն չըլինի, մատղաշ արտերը և նոյնիսկ ծառերը կարող են ցրտահար լինել և վչանալ. բայց ձիւնի տակ ապահով մնալով, երբ գալիս է գարունը և տաք արևից հալւում է ձիւնը, մատղաշ արտերը հեզհեզուկ աւելի ու աւելի են բարձրանում, ցողունաւորւում ու հասկեր բռնում, որոնք իրանց կարգին կամաց-կամաց կանաչ գոյնից փոխւում են դեղնաւունի, մինչև որ բոլորովին դեղնում են և ոսկեգոյն արտեր դառնում։ Մի կարճ ժամանակից յետոյ, երբ այդ հասկերի միջի հատիկները բոլորովին պնդանում, հասնում են, գիւղացիք սկսում են հնձել։ Այդպէս պէտք է անէր մի-ւանների նման նաև Գրիգորը, ի հարկէ եթէ անձրև գար, բայց անցաւ աշունը, սակայն անձրև ամենևին չեկաւ։ Վրայ հասաւ ձմեռը։

—«Էհ, ոչինչ, յոյսս դեռ չեմ կտրում,—ինքն իրան սիրտ էր տալիս Գրիգորը.—շուտով ձիւնը կըծածկի գետինը, որի տակ ծածկւած սերմը չի սառչիլ սաստիկ ցրտերից, այլ գետնից մնունդ առնելով հէնց որ գարունը բացւի, շուտով կըկանաչի»։

Ահա այդպէս իրան մխիթարելով, խեղճ Գրիգորը անհամբերութեամբ սպասում էր ձիւնը նըստելուն, բայց հակառակի պէս այդ տարի ոչ-միայն ձիւնը ուշ նստեց, այլև շատ քիչ եկաւ։

Անցաւ յունուար ամեռը. եկաւ գարունը։

Արեգակը ամբողջ օրը փայլում էր երկնակամարի վրայ։ Երեխաների ուրախութեանը չափ չըկար, որ այդպէս հիանալի եղանակներ են լինում։

Բայց ուրախ չէին գիւղացիք, մանաւանդ խեղճ Գրիգորը, որ երբ գնում էր արտերին ակը տալու և տեսնում էր թէ ողջ արտը հաւասարապէս կա-

նաչին է տալիս, տխուր ու սրտում, ձեռը ծոցը, մոլորված վերադառնում էր տուն։

Գարունն էլ անցաւ, սակայն արտերը չբկանացեղին. իսկ ամառն էլ այնպէս սաստիկ շոք էր, որ երբէք չէր եղած։ Ամառանոց գնացողներս անգամ շատ դժգոհ էինք. հիմա ինքդ մտածիր թէ ինչ կըլինէր դժբախտ գիւղացոց դրութիւնը, մանաւանդ Գրիգորի դրութիւնը, որ բազմանդամ ընտանիքի տէր էր։ Մեզ մարդու երեսին այլևս ժպիտ չէր երևում, ոչոքի հետ չէր խօսում, առաջւայ նման ուրախ կատակներ չէր անում։

Բոլոր ամառանոց գնացողների հետ մենք ևս գիւղից վերադարձանք քաղաք, և ես համարեա մոռացայ այդ դժբախտ գիւղը։ Բայց մէկ էլ յանկարծ, նոյեմբերի վերջերին, թէ դեկտեմբերի սկզբին, ինձ մօտ մի գեղչկուհի եկաւ։ Դա Գրիգորի կինն էր. սկզբում ես չը կարողացայ ճանաչել նրան, այն աստիճան փոխուել էր։ Նա այլևս առաջւայ գեղեցիկ, կարմրաթուշ, առոյգ գեղչկուհին չէր, այլ իմ առջև կանգնածը նիհարած, աչքերը մարած, այտերը փոս ընկած ու բոլորովին գունատ դէմքով մի կին էր։ Երբ հարցրի.

—Ի՞նչ է պատահել, Գիւլնազ, այդ ինչ օրն ես ընկել,—խեղճ կինը հեծկլտալով ընկաւ ոտքերս ու սկսեց ողբաձայն աղերսել.

—«Ամենում-Չան, նիրելի խանում, օգնեցէք, ապատեցէք մեզ սովամահ լինելուց...»։

Եւ երբ ես մեծ դժւարութեամբ հանգստացրի նրան ու սկսեցի հարցուփորձ անել, ահա թէ ինչ ասաց նա.

—«Ամենում-Չան, այն տարւայ աշնանը և ամառը, երբ դուք մեզ մօտ էիք, ինչպէս գիտես, երկինքը կապուել էր և մի կաթիլ անձրև չեկաւ, որից գետինը չորանալով սկսեց ճաքճաքել. ցանած արտերից ոչինչ չբտացանք. գիւղի մէջ սով ընկաւ, որովհետև ուտելու հաց չէր ճարւում։ Ո՛վ փող ունէր, կարողանում էր ուրիշ տեղից ալիւր բերել, իսկ մենք ու մեզ նմանները ստիպւած էինք բոյսերի արմատներով կերակրուել, որից բոլորս էլ հիւանդացանք։ Դժբաղդ ամուսինս էլ հիւանդացաւ և մի

Ա մ ա ր ա ն գ ո ւ մ

շաբաթից յետոյ վախճանուեց. «Ուսցի ես իմ մանը երեխանցս հետ անուէր ու անտիրական»,—վերջացրեց խօսքը խեղճ կինը հեկեկալով...:

—Ի հարկէ, ինչով որ կարելի էր, օգնեցի նրան, և նա գոհ սրտով հեռացաւ օրհնելով մեզ ամենքիս: Ահա, սիրելիս, Գրիգորի երեխաներն ևս քեզ պէս ուրախ էին լինում, երբ անձրև չէր գալիս, այլ լաւ եղանակներ էր անում և իրանք կարողանում էին դուրսը խաղալ, վազվզել, իսկ թէ շարունակ միայն լաւ եղանակ լինելը ճնաս է, նրանք էլ քեզ պէս չէին հասկանում:

Մայրը լռեց: Փոքրիկ Յովակը այլևս ոչինչ չըհարցրեց մօրը, այլ ընկաւ մտքերի ետևից: Նա մտածում էր. «Ի՜նչքան բաներ կան, որոնց մասին ես հասկացողութիւն չունեմ, այլ նոր պէտք է սովորեմ: Ես շարունակ այնպէս էի կարծում թէ Աստուած միայն այն ժամանակն է անձրև ղրկում, երբ բարկացած է լինում վրաս...»:

—Մայրիկ ջան, —յետոյ դիմեց նա մօրը,—հապա ինչո՞ւ Աստուած չէր ուզում նրանց համար անձրև ուղարկել. երևի նրանք չէին կարողանում լաւ խընդրել, հա՞:

—Ո՛չ, հոգիս, այն տարին հէնց սկզբից երաշտ տարի էր: Գիտե՞ս ինչ է նշանակում երաշտ տարի:

Յովակը լուրջ դէմք առած՝ նայեց մօրը և պատասխանեց.

—Այո՛, գիտեմ. հայրիկս ինձ ասել է այդ. երբ բոլորովին անձրև չի գալիս, ասում են երաշտ է և գետինը չորանում է:

—Այո՛, այդպէս է. բայց ոչ միայն գետինն է չորանում, այլ և այն ամենը, ինչ որ բուսնում է նրա վրայ և սնունդ առնում նրանից:

—Ուրեմն ծառերն էլ, մայրիկ ջան:

—Այո՛, հոգիս, ծառերն էլ. բայց գլխաւորապէս այն ծառերը, որոնք դեռ շատ մատղաշ լինելով նրբանց արմատները խորը չեն լինում մտած հողի մէջ, որպէսզի կարողանան գետնի մէջ եղած խոնաւութիւնից և թէ սնունդից օգտուել, այդ պատճառով էլ չորանում են:

Յովակը մնաց զարմացած և տարեկուսած:

«Այդ ինչպէս կարելի է, մտածեց նա. այն ժամանակ չէ՞որ մեր պարտէզի փոքրիկ ծառերն էլ կարող են չորանալ»։

Թէպէտև այդ րոպէին Յուակիմն զբաղեցնողը այնքան պարտէզի ծառերը չէին, որքան Գիւլնազն ու նրա երեխաները։

«Խեղճերը... Ուրեմն ես էլ եմ նրանց վնասել, որովհետև ամեն օր աղօթելիս՝ խնդրում էի Աստծուց, որ անձրև չըգայ, այլ լաւ եղանակ անէ, որ դուրսը խաղամ. Աստուած էլ լսել է իմ աղօթքը...»

Յուակիմ այդ մտմտուքի ժամանակ մայրը թողեց նրան մենակ և դուրս գնաց։

Յուակը երբ մենակ մնաց, սկսեց աղօթել. «Ո՛վ բարի Աստուած, պաղատագին շընչաց նա, այսուհետև այնպէս արա, որ մի օր արև լինի, միւս օրը անձրև, որպէսզի ոչ մէկիս համար վնաս չըլինի։ Ես ուրախութեամբ երկու օրը մէկ անգամ միայն դուրս կըգամ խաղալու, միայն թէ էլ երաշտ չըլինի, թէ չէ մեղք է Գիւլնազը, նրանցից էլի մէկը կըմեռնի սովից և նա նորից լաց կըլինի։ Դու, բարի Աստուած, այնպէս կանես, ինչպէս որ խնդրում եմ, այնպէս չէ՞... Այո, այո, այդպէս արա, աղաչում եմ. ահա ես էլ խոստանում եմ, որ էլ երբէք չարութիւն չեմ անիլ ու միշտ կըլսեմ մայրիկիս խրատները»։

Յուակը աղօթքը վերջացնելուց յետոյ մօտեցաւ լուսամուտին։ Անձրևը կարծես աւելի էր սաստկացել։

Յուակը այդ որ տեսաւ, ուրախութիւնից բացականչեց.

—Ա՛յ, այդպէս. հիմա ինձ համար էլ լաւ կըլինի, Գիւլնազենց համար էլ ու ամենքի համար էլ. այժմ ոչոք դժգոհ չի լինիլ, որովհետև հիմա ամենքիս համար էլ հաւատար կըլինի։

Եւ երեխան համոզուած լինելով, որ ինքը բարեխղճութեամբ կատարեց իրա պարտքը, գոհ սըրտով ու լուրջ դէմք առած՝նստեց գրասեղանի առաջ յատակի վրայ, վերցրեց մի մեծ գիրք և սկսեց ուշադրութեամբ նրա մէջի պատկերներին նայել։

Աստղերի ոգին

Ամառ էր. փոքրիկ Մարիամիկը իր մոր հետ միասին գտնւում էր Սապօլի դիւղում։ Շատ անգամ պարզ, աստղազարդ գիշերը գեղջուկ երեխաները հաւաքւում էին նրանց ամարային պատշգամբում և հետաքրքրական հեքիաթներ էին պատմում Մարիամիկին՝ երբ աւազակների մասին, երբ գազանների, իսկ երբն էլ կախարդների։

Մի անգամ էլ Մարիամիկն, իր ընկերուհիների հետ նստած ժամանակ, նայեց դէպի աստղալից երկինքը և ասաց.

—Նայեցէք, ինչպէս հրաշալի փայլում են այդ աստղերը. տեսէք որքան կախարդական լապտերներ կան կախւած մեր գլխավերևը։

—Դրանք լապտերները չեն,—լուրջ ձևով նկատեց գեղջուկ երեխաներից մէկը։—Մեր վարժուհին պատմել է մեզ, որ այդ աստղերը նոյնպիսի երկրներ են, ինչպէս և մերը, որի վրայ մենք ապրում ենք։

—Այո, իհարկէ,—հաստատեց փոքրիկ Սաշուկը,—մենք նոյնպէս ապրում ենք աստղի վրայ։ Մեր երկիրը նոյնպէս մի աստղ է։

—Հետաքրքրական է իմանալ, թէ այնտեղ ինչ տեսակ մարդիկ են ապրում,—ընդհատեց նրանց Մարիամիկը։—Նման են արդեօք նրանք մեզ։ Ա՜խ, Տէր Աստուած, ինչպէս կուզէի ես թռչել այնտեղ։

—Իմ մանամայրս ինձ ասել է,—խիստ լուրջ կերպով նկատեց Զարուհին (այն փոքրիկ ողբիկը, որն իր ծնողների մահից յետոյ շատ ու շատ տանջանքներ էր կրել), որ այնտեղ ամենքն էլ բաղդաւոր են։ Այնտեղ չկան ոչ որբեր, ոչ քաղցածներ, ոչ հիւանդներ, ոչ աղքատներ, ոչ էլ չար մարդիկ։ Իսկ դիտե՞ս,—խորհրդաւոր կերպով ասաց նա Մարիամիկին,—մանամայրս ասում էր, որ կայ աստղերի ոգի, որ ամեն առաւօտ նա իջնում է երկնքից և հանգստանում է կանաչ խոտի վրայ այնտեղ, աղբիւրի մօտ, որտեղ միշտ ջրի են գնում մեր աղջկերքը իրանց պղնձէ սափորներով։

—Դէհ, ինչ յիմար բաներ ես ասում,—ծիծաղեցին բոլոր երեխաները։—Ինչպէս թէ աստղերի ոգի. անմտութիւն է. այդ բոլորը սուտ է։

—Ոչ, անմտութիւն չէ,—վիրաւորուած պատասխանեց նրանց Զարուհիկը։—Մանամայրս ասում է, որ նա ամենաաբարի կինն է աշխարհում։

Դեռ երկար պրոյց կանէին երեխաները, եթէ նրանց չըկանչէին քնելու։

Մարիամիկը չէր կարողանում քնել։ Նա շարունակ մտածում էր աստղերի ոգու մասին, որը բոլոր կանանցից ամենաբարին էր։

Վաղ առաւօտեան, հէնց որ երևաց արշալոյսը և լսուեց վանքի զանգակի առաջին ձայնը, նա վեր թռաւ տեղից, շուտով հագնուեց և վազեց դէպի դաշտը։

—Ի՜նչ լաւ կըլինի, եթէ ես հասնեմ աղբիւրին, քանի դեռ մայրս չէ զարթնել։ Գուցէ ես պատահեմ նրան այնտեղ,—յուզուած մտածում էր Մարիամիկը դրան մօտ։—Ես կարող եմ տեսնել աստղերի ոգուն և կրկին վազել տուն,

—ասում էր նա և սկսեց վազել առանց յետ նայելու։ Նա բարձրանում էր բլուրի դագաթը, վազում էր նեղ ճանապարհով դէպի ցած և կրկին դէպի վեր ու վեր, բարձրանում։ Առաւօտեան ցուրտը կարմրացրել էր նա այտերը, աչքերը վառւում էին անհամբերութիւնից, ոտներն ըսկսում էին դանդաղ շարժւել։ Վազորդեան ցօղն այնպէս էր թրջել նրա ոտքերը, որ աղջիկը ամբողջապէս դողում էր ցրտից։ Ահա և մի փոքրիկ կածան և աղբիւրը։ Ինչպէս լաւ է այստեղ, ինչպէս գեղեցիկ է,—բացականչեց Մարիամիկը։—Երևում է, որ աստղերի ոգին դեռ չէ ցած իջել։ Էհ, ինչ կայ որ, կընստեմ ահա այստեղ խոտի վրայ և կըսպասեմ նրան։ Նա նստեց խոտի վրայ և դլուխը բարձրացնելով՝ սկսեց սուր, շատ սուր նայել դէպի երկինք։ Էհ, նստած անյարմար է նայել, աւելի լաւ է պառկեմ մէջքիս վրայ։ Եւ ահա նրան թւում է, որ մի փոքրիկ, շատ փոքրիկ լուսաւոր կէտ ցած է իջնում։ Նա հետզհետէ մըշտ աւելի է մեծանում։ Ահա նա արդէն ցած իջաւ։ Նա դարձաւ մի գեղեցիկ կին և կանգնած է նրա առաջ։

—Դուք էք աստղերի ոգին,—հարցրեց նրան Մարիամիկը։

—Այո, սիրունիկս. դու շատ էիր ուզում թռչել դէպի երկինք, որ տեսնէիր թէ ինչ են անում այնտեղ, ահա ես էլ եկայ քեզ տանելու։

—Ախ, Աստւած իմ, ինչ բարի էք դուք,—հրճւանքով բացականչեց Մարիամիկը.—յիրաւի, ես այնպէս ուզում եմ տեսնել, թէ այնտեղ ինչ է կատարւում։

—Ուրեմն նստիր իմ օդային նաւը, — ասաց նրան աստղերի ոգին,—և մենք միասին կերթանք այնտեղ։

Մարիամիկը վախվխելով նրա վզով և նստելով մի ինչ որ ամպանման թափանցիկ բանի վրայ՝ սլացաւ հեռու, հեռու... Սա երևի օդանաւ է,—մտածում էր գոհ ու երջանիկ աղջիկը։—Ինչպէս լաւ է թռչել օդի միջով, ինչպէս թարմ ու պայծառ է մեր չորս կողմը։

—Տեսնում ես, թէ ինչպէս կամաց կամաց մենք հեռանում ենք երկրից,—նկատեց աստղերի ոգին։—Ահա 2 րոպէից յետոյ մենք կըմօտենանք այն աստղին, որն այնպէս պայծառ փայլում է մեր աջ կողմը։ Չէ որ դու խիստ շատակեր ես. դու կուզենաս միշտ ճաշել այնտեղ։

Եւ յիրաւի, հազիւ էր ասել ոգին այդ բանը, որ նը-

Աստղերի ոգին և Տարիամիկը

բանց առաջ երևաց մի մեծ այգի։ Ինչեր ասէք, որ չըկային այդ այգում. ղեղձեր, տանձեր, խնձորներ, խաղող, սալորներ։ Սուերախիտ ծառերի տակ դրւած էին սեղաններ, իսկ դրանց վրայ շաքարահացեր, քաղցրեղէն և ամեն տեսակ բաներ։

Որքան երեխաները կային և նրանք ամենքն էլ վազվզում, խաղում էին և ուտում էին ինչ և որքան ուզում էին։ Բայց զարմանալի բան. որքան նրանք անընդհատ ուտում էին, այնքան էլ շարունակ կարճանում էին, հաստանում և դառնում էին այլանդակ—երկարած քթերով, ծռւած ըղթունքներով, կարճ ձեռքերով ու ոտքերով։

—Վա՛յ, գնանք, գնանք շուտով այստեղից, բարի ոգի,—աղաչում էր Մարիամիկը.—ես չեմ ուզում այստեղ տպրել. շատակերները սարսափելի հրէշներ են։

—Դէ, լաւ,—ասաց ոգին։—Դուցէ քեզ աւելի հաճելի կըլինի ահա այնտեղ ձախակողմը, որտեղ ծոյլերի աշխարհն է։

Մարիամիկը դեռ ուշքի չէր եկել, որ արդէն միւս աստղի վրայ էր։

—Այս ինչ բան է. որքա՜ն շատ երեխաներ։ Ինչո՞ւ նրանք իրանք չեն ման գալիս, այլ նրանց ման են ածում ձեռքերի վրայ,—հարցնում էր ոգուն։

—Նրանք այնպիսի ծոյլեր են, որ մոռացել են ման գալը։ Դու տեսնո՞ւմ ես թէ ինչպէս կախ են ընկած նրանց ոտքերն ու ձեռքերը, կարծես փայտէ տիկնիկներ լինեն։

—Ա՛յ, գնանք, գնանք, բարի ոգի, ծոյլերը խիստ ձանձրալի են։

—Դէհ այստեղ, ես կարծում եմ, քեզ համար աւելի լաւ կըլինի,—ասաց ոգին և դրեց Մարիամիկին մի երկրի վրայ։ Դա հրաշալի աշխարհ էր։—Ինչպէ՜ս գեղեցիկ ու հարուստ է այս երկիրը,—ուրախ նկատեց աղջիկը։—Զարմանալի է, թէ ինչու երեխաները նստած են չոկ չոկ։ Ամեն մէկն ունի այնպիսի լաւ խաղալիքներ, բայց չեն խաղում միասին։ Նայեցէք, ինչո՞վ են նրանք զբաղած. նրանցից ամեն մէկը շարունակ չոկչոկում է ու համրում իր խաղալիքները, առանց ձեռք տալու ուրիշի խաղալիքին։

—Դէհ, կուզե՞ս մնալ նրանց մօտ. սա եսասիրների աշխարհն է. այստեղ ամեն մէկը ապրում է միայն իր համար։

—Վայ, հեռանանք, հեռանանք, բարի ոդի, ինչու համար ես ճնամ միայնակ, երբ նրանցից ոչոք չէ ուզում խաղալ ինձ հետ։

—Դէ, լաւ, այստեղ անշուշտ քեզ համար աւելի լաւ կըլինի,—ասաց ոդին ցած բերելով Մարիամիկին մի գեղեցիկ աշխարհում։ Ամեն կողմ երգ էր, պար և ուրախութիւն։ Մարիամիկը չորս կողմը նայեց։ Բարի երեխաները ուրախ ժպիտով մօտ էին վազում նրան. մէկը փաղաքշում էր նրան, միւսը թոփ առաջարկում, մի ուրիշը—խօսող տիկին, իսկ միւսը նրա զրպաններն էր լցնում իր քաղցրեղէններն ու շաբաթահացերը։ Ջորս կողմը այնպէս ուրախութիւն էր, բարեկամութիւն և սէր։

—Ահա ես մտածում էի այսպիսի երկրի մասին, ուր ամենքն էլ ուրախ են և լաւ,—ինքնադոհ կերպով ասաց Մարիամիկը։

—Այո, աղջիկս, այստեղ ամենքն էլ եղբայրներ ու քոյրեր են, ամենքն էլ սիրում են միմեանց։ Եթէ սա քեզ այնպէս դուր է գալիս, ճնա նրանց մօտ, իսկ ես պէտք է թռչեմ աւելի հեռու։

—Սպասիր, բարի ոդի, մի թողնիր ինձ,—ասաց Մարիամիկը։—Դու նախ բեր այստեղ և մայրիկիս, որ նրա համար ևս այնպէս լաւ լինէը, ինչպէս և ինձ համար։

—Ներիր, իմ փոքրիկս, ես իմ նաւի վրայ բարձրացնում եմ միայն քեզ նման փոքրիկներին։

—Այն ժամանակ ես չեմ ուզում ճնալ առանց մայրիկիս,—ճչաց Մարիամիկը։ Նա մեկնեց ձեռքերը, որ վաթսաթի աստղերի ոգու վզով, բայց նա արդէն հեռացել էր նրանից։ Աղջիկը ցաւակեց, որ նստէ օդանաւը և կնկաւ անդունդ։

—Օգնիր ինձ, օգնիր,—ճչաց բոլոր ձայնով Մարիամիկը և զարթեց։

Նա պառկած էր խոտի վրայ; պղպիւրի մօտ, իսկ նրա առաջ մայրը կռացած աշխատում էր իր ձեռքի վրայ առնել նրան։

—Մայրիկ ջան, որքան բաղդաւոր եմ ես, որ կրկին քեզ հետ եմ։ Որքան էլ լաւ լինէը այնտեղ, իսկ այնուամենայնիւ քեզ հետ աւելի լաւ է։ Գիտէս, աստղերի բարի ոդին ինձ տարաւ այնտեղ, այնտեղ ամենաբարձրը։ Մայրիկ, այնտեղ չըկան ոչ պղպատներ, ոչ քաղցածներ։ Այնտեղ ամենքն էլ բաղդաւոր էին բացի ինձանից։ Ախ, մայ-

բիկ չան, չէ՞ որ այնտեղ, այն ուրախ երեխաների հետ, ես առանց քեզ էի։ Ո՛չ, ինձ համար աւելի լաւ է ապրել այս խրճիթում քեզ հետ, քան թէ այնտեղ, այն հրաշալի պալատում առանց քեզ։

Ուրախութիւնից աղջիկը խօսում էր անվերջ, և արտասուքները խեղդում էին նրան։ Մայրը թէև խիստ բարկացել էր Մարիամիկի վրայ, որ նա փախել էր այդքան հեռու առանց մի խօսք ասելու, բայց երբ գտել էր իր կորած երեխային, մոռացել էր բոլորը և միայն համբուրում էր արտասուքից կարմրած նրա երեսը։

Սվետիկա

ՅԵՐ ԱՒՓԵՆԻՆ

Չատաբրան ուրին լալիս էր մի օր՝
Աւազի ափին կախուած գլխիկոր։
«Ինչո՞ւ ես լալիս, իմ ագի՛զ ընկեր»։
—«Է՜հ, խոր հառաչից սգաւոր ուրին.
«Ես մատաղ լինիմ քո անուշ ջրին,
«Մէկ լաւ նայիր ինձ՝ տես ինչ եմ դառել.
«Կերել է ճիճուն, արեւն ինձ վառել.
«Էլ ես չեմ ապրի, իմ դարը անցաւ,
«Տերեւս թափուեց, ճիւղս չորացաւ։
«Թէ մի քան ունիմ սրտիս մխիթար,
«Աբմատէս եղած այն ուռն է դարար։
«Պահի՛ր դու նորան քո անուշ ջրով,
«Զուգիր, զարդարի՛ր մատաղ ճղերով.
«Ու թող քո վճիտ ջրերի մ'իջից
«Իր ղէմքը տեսնէ մատաղ ուռենին,
«Ու սիրտը լցի մանուկ հրճուանքով,
«Եւ քո խոխոջին ձայնակցէ երգով։
«Դէ՜հ, անուշ ընկե՛ր, քեզ վերջին բարեւ,
«Եւ քեզ, ծերուկիս մատանգ, նորարեւ.
«Կացիններն առած՝ գալիս են մարդիկ,
«Որ ինձ կտրատեն, անեն վառելիք...

Գ. Պետոսեան

Քարի մէջ արիւն կայ

Փոքրիկ էի։ Հազիւ ութ տարեկան։ Մէկ անգամ մայրիկս շատ ծանր հիւանդ էր։ Երեսը բոլորովին դուռնատ, աչքերը փակ, շրթունքները կիսով չափ բաց, պառկած էր։ Նա հազիւ էր շնչում։ Բժիշկները դնում գալիս էին և յուսահատ գլուխները շարժում։

Հայրիկս խիստ դուռնատ, աչքերը անքնութիւնից կարմրած, տխուր, շատ տխուր նստած էր մայրիկիս մօտ։ Իր հայեացքը չէր հեռացնում մայրիկիս դէմքից։ Ես խօսում էի, բաներ էի հարցնում մայրիկիցս, բայց նա ինձ չէր ճանաչում և ոչինչ էլ չէր պատասխանում։

Քանի գնում՝ հայրիկիս դէմքը աւելի տխուր ու յուսահատական էր դառնում։ Վերջապէս հեռացնելով հայեացքը մայրիկից ասաց՝

— Վաչիկ, գնա փողոց, խաղա ընկերներիդ հետ. կըկանչեմ քեզ ճաշելու, երբ մայրիկդ մի փոքր լաւ կըլինի։

Վերջին խօսքերը նա արտասանեց խիստ յուզուած և հազիւ զսպելով արտասուքները։ Իմ աչքերը լցուեցին արտասուքով։ Բայց ես գնացի։

Փողոցում երեխաները, ինչպէս միշտ, այնպէս էլ այսօր ուրախ խաղում էին։ Միացայ նրանց, որ մի կերպ տխրութիւնս անցնի։ Մենք «ամրումն» էինք խաղում։ Ես այսօր շատ վատ էի խաղում. ուզում էի թռնել, չէի կարողանում։ Մայրիկս չէր հեռանում մտքիցս։ Տխրութիւնս քանի գնում՝ սաստկանում էր։

Մեզնից քիչ հեռու խաղում էին մի խումբ տղաներ։ Տեսնելով, որ ես չեմ կարողանում թռնել, նրանք սկսեցին ծաղրել ինձ։ Ջաւ տղաները չէին հասկանում իմ արտասրութիւնը, իմ վիշտը։

— Ա՛յ տղերք, Վաչիկին նայէք, Վաչիկին, չի կարո-

պանում թռնել։ Հայ, հայ, ամօթ չի՛։ ատ, գնա տուն, գնա, Վահիկ։ Գնա մատաղ ծաւիր ու չուլքի գործիր, գնա, գնա։ Տօ, քո ի՞նչ բանն է «ամթուրման» խաղալը։

Այսպէս իմ վիշտը բաւական չէր ինձ, դեռ ծաղրում էլ էին։ Արիւնը խփեց դլուխս։ Ես վերցրի մի մեծ քար և ուզում էի խփել ծաղրողներին։ Վանին ձեռքս բռնեց։

— Քարով մի խփիր, Վահիկ, քարի մէջ արիւն կայ, — ասաց նա։

Ես վայր ձգեցի քարը, և էլի շարունակեցինք խաղալ։ Ինձ կրկին չէր աջողւում թռնել։

Չար տղաները շարունակում էին ծիծաղել վրաս։

— Տօ, բաւական է Է, ատ, ամօթ է Է, գնա տուն Է։ Դու ա՛ղջիկ ես, ա՛ղջիկ. գնա մայրիկիդ ասա, տիկնիկ շինի քեզ համար, խաղացրու։ Քո ի՞նչ բանն է «ամթուրման»։

Այս անգամ ես բարկութիւնս չկարողացայ զսպել. վերցրի մի ահագին քար և ամբողջ ուժովս շպրտեցի դէպի այդ տղերքը։ Քարը կպաւ ուղիղ Գուրգէնի գլխին. իեղձը ճչաց ու վայր ընկաւ ամբողջովին արեան մէջ կորած։

Իմ բոլոր ընկերները փախան իրանց տները, որ իրանց չմեղադրեն այդ բանի համար։ Միդճս ինձ սաստիկ ստանջեց։ Ուզում էի վազել Գուրգէնին օդնելու, բայց այդ միջոցին Գուրգէնի ընկերները մի-մի քար վերցրած յարձակւեցին վրաս։

Ես սկսեցի վազել դէպի մեր տունը, նրանք իմ յետևից։ Արդէն յոգնել էի, շունչս կտրւում էր, բայց չէի կարող կանգնել. ինձ կըհասնէին։

Հաւաքեցի ուժերս և էլի սկսեցի վազել։ Մեր տանը մօտեցել էի, երբ նրանցից մէկը մի քար խփեց ուղիղ ոտքիս։ Ես կաղալով էլի վազում էի։ Վէրքիցս առատ արիւն էր հոսում։ Վերջապէս հասայ տուն. ուզում էի դուռը փակել, բայց տղաները այնպէս ամուր հրեցին, որ դուռը պոկւեց։ Ես վայր ընկայ, դուռն ընկաւ վրաս։

Ահագին ծանրութեան տակ ոսկրները չարչռում էին։ Ուզում էի գոռալ, չէի կարողանում։

— Վաչիկս, Վաչիկս, վեր կաց, դպրոց գնալու ժամանակ է...

Ես վեր թռայ տեղիցս։ Մօտիս կանգնած էր մայրիկս։ Անչափ ուրախացայ, երբ տեսայ, որ այն բոլոր դժբաղդութիւնները երազումս են կատարւել։ Մայրիկս էլ, Գուրգէնն էլ, ես էլ, բոլորս էլ առողջ էինք։

Ուրախութեանս չափ չկար. աշխոյժ հագնուեցի, որ գնամ դպրոց։ Բայց այդ երազը այնպէս էր ազդել վրաս, որ մինչև հիմայ էլ ես քարի ձեռք չեմ տալիս՝ ամենախիստ բարկութեանս ժամանակներում իսկ։

Տ. Վեր. Դադիան

Ս Ր Ա-Բ Է Կ Ը *)

(Պատմուածք)

I.

—Չէնց որ Վարդավառի օրն է գալիս, ողորմի հօրս, միտքս է գալիս. նա մեզ պատմել է՝ ով է Սարիբէկը. ինքն էլ իր մեծերից լսածն է պատմել.

—Երևի մեր սուրբ հայրերից լլելինի, ինքն էլ հալածւած կրօնի համար: Այսպէս խօսում էին երկու ծերունի՝ հասակով, տարիքով միմեանց շատ մօտիկ...

—Ջէ, շատ հեռու ես դու իմ լսածից. սկի էլ մօտ չես հօրս պատմածից. դէ որ այդպէս է, ես քեզ կըպատմեմ, դու ինքդ կըտեսնես որ դա մի հրաշք է:

Այսպէս սկսեց մեր Գոքուր ապէրը.

—Աստւած ողորմի ձեր մեռլի հոգուն, Աստւած ողորմի և իմ հօր հոգուն:

—Աստւած ողորմի,— մրմնջաց միւսը:

—Ինչ պիտի պատմեմ, նրա պատմածն է, ղորթն ու սուրը չեմ կարող ջոկել:

II.

—Մեզանից քառասուն թէ յիսուն տարի, այդքան էլ չեմ յիշում, այդ մի հարցրէք... Զատկի տօնն էր. նոտած մեր օդայում, մի մատաղ մորթած՝ քէֆ էինք անում. յանկարծ իմ հայրը բաժակը լցրեց և քէֆովացած մեզ այսպէս դիմեց. «Այս էլ թող լինի մեր լուսահոգի մօլլայի տղի հոգու կենացը»... Զարմանքը պատեց նոտած հիւրերին և նոտած տեղները քարացած մնացին, թէ սա ինչ մօլլա է, որի կենացը այս սուրբ մատաղի մէջը խառնեցին:

—Զուր է, չենք խմիլ, մինչև չիմանանք մօլլայի տղի հոգու արժանիք. և հակառակելով հօրս կենացին, բռնած բաժակներն խակոյն ցած դրին...

—Այ թէ լաւ արին: Այ Գոքուրը ապէրը, ախր սուրը մատաղն որտեղ ու մօլլան որտեղ,— Գոքուրի խօսքը կարեց ծերունին ու մի կրակ դրեց հանգած չուրուխին:

—Ներանք հօ լաւ արին... դէ դու լաւ լսիր թէ ինչեր պատմեց նրանց իմ հայրը... Եւ ոգևորւելով Գոքուր ապէրը իր մեծ պապերի արդար վարմունքից, քմծիծաղ տալով, քաշեց բըռնոթին և թարմ ուժ առած՝ նորից սկսեց:

III.

Ահա իմ հայրը այսպէս սկսեց.

—Մեզանից շատ հեռու, տարի տարրատում (շուտ-շուտ եմ պատմում, դինին տառչում է) իր ժառանգներով մօլլան էր ապրում. մօլլան իմաստուն, գիտուն ու հանճար, Մահմէդի կրօնին հլու հպատակ. նրա տան դուռը միշտ բաց էր լինում և անցորդներին, տեղ չունեցողներին իր յարկի տակ սրտանց ընդունում: Այսպէս մի անգամ մեր սուրբ հայ-

---

*) Սրա-բէկը մի սուրբ է, որը գտնւում է Շուշի քաղաքից 6—7 վերստ հեռաւորութեան վրայ:

բերից դէպ երուսաղէմ ուխտի գնալիս սարի ստորոտում մութը վրայ կոխեց և մեր սուրբ հօրը շւարեցրեց։ Հիւրասէր մօլլան ընդ առաջ ելաւ, ուխտաւորին իր յարկը տարաւ և շատ ափսոսաց տարաժամ հիւրին, որ միջոց չունի մի ոչխար մորթի։

—Բարեկամ մօլլա, ինձ ոչինչ պէտք չէ և դրա համար շատ հոգ մի արա. քո տան մնալն էլ ինձ բաղդաւորութիւն է և Ա-մենակալի տուած բարիքից մենք վայելեցինք. թոյլ տուէք հիմա աղօթենք, քնենք, որ լուսադէմին ճանապարհ ընկնեմ։

—Շատ լաւ ես ասում, Իսայի որդի. ահա քեզ սենեակ, ձեր աղօթքն արէք... Բարեսիրտ մօլլան տւեց մի սենեակ, ինքն էլ քաշւեցաւ ու թողեց մենակ։

IV.

Հէնց որ հայր-սուրբը աղօթել սկսեց, մօլլայի տղան շատ հետաքրքրւեց. գնաց մօտեցաւ օթախի ճեղքին, որ հայր-սուրբին թամաշա անի. թամաշա անի, որ ծաղրի առնի... բայց հէնց որ նայեց, մնաց քարացած. ձեռքն ու ոտքն իսկոյն թուլացան. ինչ տեսաւ, գիտէ՞ս.—մի զարմանք, հրաշք, որ իր կեանքումը ոչ տեսած էր և ոչ լսած. հայր սուրբը կանգնած, ձեռները տարածած, ոտները գետնից մի կանգուն կտրած, կախած օդի մէջ, սուրբը լուսով պատած, հրեղէն լեզուները չորս կողմից կախած...

—Աստծոյ հրամանն էր՝ պիտի որ լինէր, որ անօրէնին ճանապարհ բերէր,—ասաց ծերունին երկիւղածութեամբ ու խաչակընքեց ևր ակնածութեամբ։

—Հա,—մտածեց Աստծոյ զօրաւոր կամքին. բաս նա կըթողնէր, որ իրան ծաղրէն, — ընդհատեց Գոքուրը քան-քան ծիծաղով։

—Աղօթքը վերջացրեց հոգևոր հայրը և հանգիստ սրտով մտաւ անկողին...

V.

Այս բանը տեսնելով մօլլայի տղան, տեղն ու տեղը լեղին պատռուաւ. աչքերը մթնած, գլուխը կորցրած, դողդող քայլերով մօտեցաւ նրան և աղերսելով խօսել սկսաւ.

—Մեծ է ձեր հաւատ, ազնիւ վարդապետ. ես իմ աչքով տեսայ—չեմ կարող ժխտել. թէպէտ իմ ապգը դառնայ ինձ թշնամի, ես էլ եմ գալու ձեր ուխտաւորին. թողնեմ Մահմէդի դուրանն ու հաւատ, դառնամ ձեզ նման ջերմ քրիստոնեայ... Սակայն, զգոյշ պիտ ինամ մինչ ուխտաւորին դէթ արժանանամ սրբի գերեզմանին. թող այն ժամանակ կատաղի հայրս, որքան կարող է իր հալածանքն անէ. բազմաթիւ բէկեր, խաներ, իշխաններ հօրս սարսափից Մահմէդի կրօնը շատ պինդ պահում են. բայց որ երկինքն էլ փուլ գալու լինի, ես պիտի դառնամ Իսայի կրօնին։

Բայց մեր հայր-սուրբը զարմանք չունեցաւ, զարմանքի հետքըն իսկ դէմքին չերևցաւ. նա իսկոյն զգաց որ թուրքի զարմը առանց Արարչի հզօր կամքի չէ... եւ մեղմութեամբ պատասխան տւաւ.

—Ես քո հայր մօլլային ոչինչ չեմ ասիլ, թէ ինչ հրաշքով դու դէպի մեզ դարձար. միայն քեզ կասեմ՝ թէ որ գալու ես, վաղ առաւօտեան շատ շուտ վեր կացիր։

VI.

Հետևեալ օրը կէսօրւայ մօտերքին իմաց տուեցին մօլլա Նուբարին, որ տղան փախել է հաւատը փոխած... Սփրթնեց մօլլան... դողաց բոլոր մարմնով... մռնչաց, որոտաց ահաւոր ձայնով, երբ լսեց՝ իր որդին կրօնը փոխ եղած.ու հրաման տւաւ թամբել սև ձին։

Հեծաւ նա իր ձին, թռաւ, սլացաւ, գետնի փոշին երկինք բարձրացաւ. մահաբեր թուրը ձեռին պինդ բռնած, կէս ճանապարհին իր որդուն հասաւ... Աստծոյ հրամանով մեր հոգևոր հայրը մօլլայի աչքից իսկոյն չքացաւ. բարկութեան թոյնով, վրէժի խայթով կատաղած մօլլան թռաւ դէպ որդին, շանթեր խփելով ահաւոր գոռաց.

—Մեռիր, Մահմէդի անարժան զաւակ. դու դաւաճանեցիր Իսլամի բանակ... Ասաց ու զարկեց մի քանի թափով, որդու մարմինը արեց մի քանի կտոր։ Մօլլայի տղան—Իսլամի յիշատակը դարձաւ մեզ համար բարի նահատակ...

VII.

Այստեղ էլ մի հրաշք... Որդու հսկայ մարմնից միայն մի կաթիլ արիւն դուրս ցայտեց. թռաւ կաթիլը. մի քանի կանդուն, մի ծառի դիպաւ՝ հսկայ, հաստատուն. ծակւեց այդ ծառը, ինամէջ դարձաւ և թանձր կաթնագոյն ջրով լցւեցաւ. ծորաց հեղուկը—ծորում է անդադար, և այդ օրւանից հեղուկը ճար դարձաւ, որ չորացնում է երեսի մըկնատամ *)։

—

Սրբւեց մեզ համար մօլլայի տղան, սրբւեց նրա հետ ծառը հաստատուն. և այդ այն սուրբն է, ծառայ եմ նրան, որ ամեն տարի զուռնով, ամբոխով ուխտ ենք գնում կարաւաններով. մենք անւանում ենք նրան Սարիբէկ, բայց մեր պապերի խօսքով նա է Սրա-բէկ... Երբ հայրս պատմեց, նա պահ մի լռեց և տպա դարձաւ տպշած հիւրերին.

—Ես հօ պատմեցի մօլլայի տղի հոգու արժանիք, ձեյժմ ինչ ունիք—վեր առէք գինին...

Թար. Մելիք-Ջախնագար

*) Մկնատամը երեսի կոշտեր են։ Ով ունենում է այդ կոշտերից, ուխտ գնացած ժամանակը վեր է առնում մկնատամի ծառի չրից և քսում կոշտացած տեղերը. այսպէս կրկնելով մի քանի անգամ, կորչում են երեսից կոշտերը։

1908 թուին լրացաւ 250 տարի այն օրից, երբ գործածութեան մէջ մտաւ ներկայ մատիտը։

Այս պարզ, բայց իր նշանակութեամբ մեծ գիւտի նախնիքը արճիճի կլորացրած կտորներն էին, որ գործ էին ածում հռովմայեցիք և նրանցով աւելի շուտ դծագրում էին քան գրում։ XIV-րդ դարում գործածութեան մէջ մտան արճիճէ և արծաթեայ մատիտներ, որոնցով գրում էին գլխաւորապէս նկարիչները և նախշողները։ Առաջին անգամ այդ մատիտները հաւանական է որ երևացել են Իտալիայում (matita)։ Այնուհետև արճիճը հալում էին անագի հետ։ Այդ տեսակ մատիտներով էին նկարում ի միջի այլոց Դիւրերը և Գօլբէյնը։

Ներկայ մատիտների սկիզբը դրեց 1658 թուին Կումբերլենդում (Անգլիա) գրաֆիտի հանքի բացումով, որ գտան իբրև լաւ գրելու միջոց։ Սկզբում շատ դժուար էր գրաֆիտից մատիտներ պատրաստել։ Գրաֆիտը նախ սղոցում էին մեծ կտորների, յետոյ սրանք մանր և վերջապէս այդ մանրերից էլ բարակ գրաֆիտ է ճարել էին պատրաստում և փայտիկների մէջ դնում։

Որովհետև անգլիական գրաֆիտը թանգ էր նստում և, բացի այդ, բոլոր պահանջներին չէր համապատասխանում, ուստի Եւրոպայում գրաֆիտի հետ սկսին խառնել զանազան խառնուրդներ, ինչպէս օրինակ ծծումբ և նման բաներ։ Գերմանիայում առաջին մատիտները սկսեցին պատրաստել Շաէյն գիւղում, Նիւրընբէրգի մօտ և առաջին գործարանը հիմնեց այդ գիւղի բնակիչ Գասպար Ֆաբերը։

Այդ վերաբերում է XVIII դարու սկզբին, երբ արդէն Գերմանիայում և Աւստրիայում գրաֆիտը գտնւած էր։

1795 թուին երկու ֆաբրիկանտներ՝ Յովսէփ Հարդմուտ և ժակ Կոնտէ, սկսեցին միաժամանակ գրաֆիտի հետ խառնել կաւ։ Այդ մեծ յաջողութիւն ունեց մատիտի ֆաբրիկացիայի գործին։ Նոր միջոցը հնարաւորութիւն տուաւ զանազան ամրութեան և սեւութեան մատիտներ պատրաստել։ Այն օրւանից մատիտի ֆաբրիկացիան սկսեց արագ զարգանալ և Եւրոպայում մեծ չափեր ստացաւ։ Ամենանշանաւոր արդիւնաբերութեան տեղը մնում է Նիւրընբէրգը, ուր 30 գործարան պատրաստում են տարեկան 300 միլիոն մատիտ։

Պուճեղ Աղայեան

Մանկական աշխարհ

II տարի Պատկերազարդ գեղարդ ամսաթերթ II տարի
1910 թ. № 6

Հրատարակվում է մանանակցությամբ ժրաջան աշակերտուհիների եւ աշակերտների

Խմբագիր-հրատարակիչ ԱՄՈՒՐ

Աշակերտ | դասարանի ՍՕՎԱՍԻԼՆԱՑԻ ուսումնարանի

ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԳՆԱԼՍ

I

Աշնան վերջին օրերն էին։ Օ... դիւղացիք բոլոր դաշտային աշխատանքները վերջացրել, ձմռան պատրաստութիւնները տեսել, այգիների ու պարտէզների պտուղները հաւաքել ներս էին բերել ու հանգստանում էին։ Էլ մարդ չէր ճնշել դաշտերում, այգիներում. բոլորն էլ դրսի գործերը պրծած, անային գործերով ուռւտրականութեամբ էին պարապում։ Որը իր մանրավաճառանոցն էր բաց արել, որը իր դարբնոցը, որը դերձակութեամբ էր պարապում և որը զանազան օգտակար գործերով։ Մեր գիւղի տիրացուն էլ պարապում էր մի ու-

նոյն արհեստանոցում թէ ուսուցչութեամբ և թէ ժամագործութեամբ։ Ժանուէթը երկու դուռ ունէր՝ առաջի և յետևի կողմերից։ Առաջի դռնից էլ ու մուտ էին անում իր յաճախորդները, իսկ յետևի դռնից—աշակերտները։ Ժանուէթի աջ կողմը դրած էր մի մեծ սեղան, որի վրայ դասած էին զանազան տեսակ ժամագործի գործիքներ։ Պատերի և լուսամուտների ապակիների վրայ էլ կախած էին զանազան տեսակ ժամացոյցներ թէ շինած վերջացրած և թէ կիսատ մնացած. իսկ ձախ կողմը շարած էին մի քանի կոտրատած հին նստարաններ, որոնց վրայ նստում էին աշակերտները և պարապում։ Աշակերտների դիմացը մի փոքրիկ դուռ էլ կար, որը տանում էր վարժապետի սենեակը։ Ես այդ ժամանակ մօտ 10—11 տարեկան էի, բայց ծնողներս դեռ չէին մտածել ինձ ուսումնարան տալ։ Երբ տեսնում էի հասակակից ընկերներիս պայուսակը ուսերից կախած՝ ուսումնարան գնալիս, նախանձում էի նրանց, որովհետև նրանք գրել-կարդալ էին սովորում, իսկ ես այդ հասակիս տանը. նստած՝ անտեղի չարաճիւնեերով էի ժամավաճառ լինում, Ուման սէրը իմ մէջ քանի գնում՝ զօրեղանում էր։ Երբեմն, այդ սէրուց դրդուած, գնում էի ծերունի հօրս մօտ և խնդրում, աղաչում, որ ինձ ևս ուսումնարան տանի։ Բայց նա մերժում էր ինձ ասելով. «Է՛հ, որդի, գործ չունե՞ս, կարողացողներն ինչ են դառել, որ դու ինչ դառնաս»։ Օրինակ էր բերում մի քանի կարդացողների կեանքից, որոնք գիւղի տիրացուի մօտ բաւական կարդալուց յետոյ ոչինչ չէին սովորել։ Բայց հօրս այդ խօսքերը ինձ չէին կարող համոզել, որովհետև ես արդէն հասկացել էի թէ ինչ է ուսումը. նամանաւանդ սիրեցի ուսումը այն օրից, երբ մեր տանը պատահմամբ մի անգամ քաղաքից հիւր եկաւ մի մարդ իր 13 տարեկան որդի Բարկէնի հետ, որը սովորում էր միջնակարգ ուսումնարանում։ Նրա խելացի, գրաւիչ խօսակցութիւնը, հաճելի շարժուձևերը ինձ այնքան դրաւեցին, որ ես չէի կարող չընդհանձել նրան և չաշխատել նրա պէս լինել։

Այդ սէրը, այդ փափագը վերջ ի վերջոյ ստիպեց ինձ չըլսկել ծնողներիս և փախչել տիրացու Սարգսի մօտ։ Մի առաւօտ վաղ վերկացայ, շորերս հագայ, պատրաստուեցի, մի գիրք և մի տետրակ վերցնելով հետս՝ ծնողներից ծածուկ ուղևորուեցի դէպի տիրացու Սարգսի ուսումնարանը։ Մինչդեռ ես շարունակում էի ճանապարհս խորասուզած զանազան մտքերի մէջ թէ ինչպէս պէտք է ներկայանամ վարժապետին, յանկարծ յետ նայեցի և տեսայ որ հայրս կամաց-կամաց գալիս է յետևիցս։ Ես խնդրեցի քայլերս արագացրի, վախենալով թէ մի գուցէ ձեռնելու դիտաւորութեամբ է եկել յետևիցս։ Բայց իմ կարծիքը ըոլորովին սխալ դուրս եկաւ։ Նա մօտեցաւ ինձ ժպիտը երեսին և ասաց. «Ո՛րդի, ինչպէս տեսնում եմ, շատ ես ցանկանում կարդալ. գնանք, ես տանեմ քեզ տիրացուի մօտը, տեսնենք ինչ է լինելու վերջը»։ Իմ ուրախութեանը չափ չըկար այդ րոպէին։

Ներս մտանք դպրոց։ Վարժապետին շրջապատել էին մի քա-

նի թուրք յաճախորդներ, իսկ միւս կողմը աշակերտները լուռ ու մունջ նստոտած՝ ուշի ուշով հետաքրքրւում էին վարժապետի և նրա յաճախորդների խօսակցութիւններով։ Նրանք տաք վիճաբանութեամբ սակարկութեան մէջ էին։ Մեր ներկայութիւնը մի րոպէ ընդհատեց նրանց։

Դեռ վարժապետին կատարեալ չըտեսած՝ ես սկսեցի «թէյմալայ» անել, ինչպէս հայրս պատւիրել էր առաջուց։ Վարժապետը մի քանի սովորական հարց տալուց յետոյ իսկոյն տեղ նշանակեց ինձ նստելու։ Հայրս մի փոքր խօսելուց յետոյ ասելացրեց. «Վարժապետ, միսը քեզ, ոսկորը ինձ»։ Դրանով ուզում էր ասել թէ՝ մարդ դառնալու համար որքան ուզում ես ծեծիր։ Վարժապետին էլ այդ էր պէտք։

Նա պատրաստում էր մեզ հետ միայն այն ժամանակ, երբ յաճախորդներ չէին լինում։ Մենք սովորում էինք տիրացու Սարգսի մօտ հին տանջող մեթոդով գրել, կարդալ և միևնոյն ժամանակ առուտուր անել, տուտ խօսել, մուշտարի խարել, սակարկութեան բոլոր խորամիտ ձևերը սովորել և օրը մի քանի անգամ «քհօֆակ ուտել»։ Ահա այսպէս դրւեցաւ իմ գրագիտութեան, իմ ուսման հիմքը։

II

Անցաւ երկու տարի, ես դեռ աշակերտում էի տիրացու Սարգսի արհեստանոցում։ Թէ որքան անօգուտ տանջւել եմ այդ դժոխային հիմնարկութեան մէջ այդքան ժամանակւայ ընթացքում, ես և ինձ հետ միասին տանջւող ընկերներս միայն գիտենք։ Երևի դեռ շատ պիտի աննպատակ տանջւէի այդտեղ, եթէ մեծ եղբայրս, որը ապրում էր Կ. քաղաքում, չըհրաւիրէը ինձ իր մօտ և չըտար կանոնաւոր ուսումնարան։ Կարճ ժամանակից յետոյ հեռացայ ժամագործ խալֆայի մօտից և ընդունւեցայ Կարսի քաղաքային ուսումնարանում և կատարեմ այս տարի։ Մեր հայոց լեզւի ուսուցիչն է պ. Ս. Տէր Մելքիսեդեկեանը, որը հայոց լեզւի դասերին աւելի շատ յորդորում է մեզ դրել շարադրութիւններ, կարդալ դրքեր։

Թէ որքան տառ ենք գնացել հայոց լեզւի մէջ, ցոյց է տալիս այս իմ անդրանիկ յօդւածը, որ ուղարկելով Աղբիւրի խմբագրութեանը, խնդրում եմ տպագրել, որով խրախուսած կըլինենք ինձ և իմ ընկերներիս հետաքրքրւելու այսպիսի աշխատութիւններով։

Գ. Աչվազեանց

Աշակերտ Ղարսի քաղ. ուսում.

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆԻՑ

Երեւան, *12 օգոստոսի*

Ես ստացայ Ապրիլի № 5—6, որտեղ տպւած էր իմ փոքրիկ բանաստեղծութիւնը «Դեղձուկի երգը» թոյլ ուրիշ անունով՝ օրինակ՝ Գրիգոր Վարդանեանի։ Զըգիտեմ թէ ինչպէս է եղել այդ խնդրում իմ բոլոր այն բաժանորդներին, որոնք ստանում են «Աղբիւր» ամսաթերթը, թող Դեղձուկի երգ բառ-

նաստեղծութեան տակ Գրիգոր Վարդանեանի փոխարէն գրեն՝

Դեղարգ Վարդանեան

Երևանի քաղաք. դպրոցի աշակերտ։

Սանահին, *16 օգոստոսի*

Մեծ հանդիսով օծւեց Սօֆասիլեայի ջանքերով Սանահնում կառուցւած Արգութեան դպրոցը։ Հանդէսը մեծաշուք էր։ Նկարագրութիւնը և նոր դպրոցի շինութեան պատկերը հետս կը բերեմ։

Սմբիկ

ՕԳՏԱԿԱՐ ԺԱՄԱՆՑ



Եթէ կտրել էք մի շիշ, կամ արժէքաւոր ապակեայ մի անօթ, դէն չըշպրտէք։ Ածեցէք այդ կոտրած շշի մէջ ձէթ այնքան, ինչ բարձրութեամբ կամենում էք, որ շիշը կամ անօթը պատրաստէք։ (Նայեցէք նկարին)։ Ապա կլոակի մէջ շատ լաւ կարմրացրած շամփուրը կոխեցէք այդ շշի մէջ։ Կըլսեք խոշոր պայթուն։ Ի հարկէ զգոյշ պիտի լինէք, որ ապակու փշրանքները չը դիպչեն ձեր աչքին։ Պայթունը լսելուց յետոյ հանեցէք շամփուրը, և կըտեսնէք, որ շիշը կոտրել է համահաւասար ձէթի մակերևոյթին։

Տ.

Փիւռացի մանուկների երգերից

Օհաննէս, հէյ Օհաննէս,
Ջէբիցդ արծաթ փողդ հանես,
Դու սրբերին բաժանես,
Աստծոյ առաջ պարգևես։

ԽՄԱՅԻՔ ՈՒՆԻ

Բ Ա Ռ Ա Խ Ա Ղ

Դասաւորեցէք այդ մեծատառերը և կպցրէք գրած խօսքերին այնպէս, որ առաջ նոր խօսքեր և, բացի դրանից, այդ մեծատառերը վերևից ներքև կարդալով՝ առաջ մի հայ գրողի ազգանուն։

Նազտատուր Ohանիջանեան
Աշակերտ Բագրեայ Առաջ. ուսումն.

Վ=գահ։
Ն=լուր։
Ա=սոխ։
Ե=արսենիկ։
Ո=ղեկ։
Բ=շուն։
Ա=անի։

Շարունակում է 1910 *թ. բաժանորդագրութիւնը*

XXVIII ՏԱՐԻ

ԱՂԲԻՒՐ եւ ՏԱՐԱԶ

XXI ՏԱՐԻ

Պատկերազարդ հանդէսների

Տարեկան բաժանորդները ստանում են՝

1) ԱՂԲԻՒՐ, 2) ՏԱՐԱԶ, 3) ԱՂԲԻՒՐԻ ԱԿՈՒՆՔ, 4) Ա-ՌՈՂՋԱՊԱՀ, 5) ԴԵՂԱՓՆՋԻԿ, 6) ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ Սա-նահնի վանքի դարաւոր հոյակապ կամարների տակ, 7) Մ. ՍԱ-ՀԱԿ, 8) Մ. Մեսրոպ, 9) Վարդան զօրավարի ս. դրօշակը օրհ-նում է Ղեւոնդ Երէց, 10) ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ, 11) Հայոց Հայրապետի ուղեւորութիւնը, 12) Մ. Իչման Տաճարի դիմանր-կարը 19-րդ դարում, 13) ԴԵՂԱՆԻ ՕՐԱՑՈՑՑ 1911 թ., 14) ՄԱՆ-ԿԱՆՑՈՒՄ, պիէս, 15) ՉԱՐԱՁԻ ԱՐՄՈՒՇԻԿԻ ճանապարհոր-դութիւնները ու արկածները, 16) Հայրենիք սրբազան, տեղա-պրական, 17) Ապրիլի 30-ին Աղբիւրի և Տարազի 1910 թ. 5000 №№-ները բաժանորդների մէջ վիճակ գցած 500 տարբեր-ների 2 տոմս:

Այս բոլորն ստանալու համար տարեկան բաժանորդները (Դպրոցներ, դրադարանները, հասարակութիւնները, հասկաւոր բա-ժանորդները) վճարում են 10 *ր., արտասահման 18 ր. կամ 50 ֆր., իսկ դպրոցական աշակերտի հասցէով* 5 *ր.:*

Ապառիկ եւ մաս-մաս վճարող բաժանորդագրութիւն չ՚ընդունւում:

ՀԱՍՑԷ փոխելու համար պէտք է ուղարկել նորի հետ և հին հասցէն ու 35 կ. էլ մարկա, հակառակ դէպքում հասցէն չի փոխւում:

Հասցէն՝ ТИФЛИС, Редакція АГБЮР *կամ* ТАРАЗ.

TIFLIS. Direction AGBUR *կամ* TARAZ.

Կ Ո Չ

Աղբիւր և Տարազ անհրա-ժեշտ պարբերական հանդէսներ են, և կարևոր է հայութեան բո-լոր խաւերում սրանց տարած-ւելը վիճակացարար առաջ տանել:

Կարիք չկայ մեզ ուղարկելու գրութիւններ, այս ու այն կէտը պատմայաբանելու պատճառները, դա-վեսաններ, խրախոյանքներ կարդա-լու: Մենք քաջ ըմբռնում ենք մեր առանձնաձ դրծի վեհա-թիւնն ու օգտակարութիւնը հա-յութեան համար:

Մեզ անհրաժեշտ է, որ ան-համեմատ աւելի ընդարձակ տա-րածուն Աղբիւրն ու Տարազը:

Հայոց դպրոցները, շատ քիչ բացառութեամբ, չեն առանում Աղբիւր և Տարազ: Հայոց ու-սումնարանների աշակերտները զրկում են նոյնիսկ տարեկան մէկ ր. վճարել և բաժանորդա-գրուել Աղբիւրին, մինչդեռ քա-ղաքային, վեմբաւօնների, մի-նիատրական դպրոցները և նրանց աշակերտները շատ խոշոր թիւով բաժանորդ են տալիս Աղբիւրին:

Ի՞նչով բացատրել այս փաստը:

Հրապարակի վրայ դնելով այս հարցը և ապատելով պատասխա-նի, այսու հրաւիրում ենք հայ դպրոցական վարչութիւնները մտցնել իրանց տարեկան բիւջէի մէջ Աղբիւր-Տարազի բաժանոր-դագին 10 ր. և առարգրել Աղբիւր-Տարազ հանդէսները:

Հրաւիրում ենք հայ ուսուցիչ-ներին և ուսուցչուհիներին տա-րածել Աղբիւր և Տարազ իրանց աշակերտների ընտանիքներում:

Իսկ մեր դպրոցական բաժա-նորդ աշակերտներին էլ հրաւի-րում ենք իրանց ընկերներին յորդոր կարդալ, որ նրանք էլ Աղբիւրին, Տարազին բաժանորդ գրուեն: